

ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ 2006-97 ՇԱՐԱԹԵՐԹԻ

ԲԱՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Հերթայ 1896 տարեշրջանի
Պոչկարիայ համար տարեկան 8 ֆր
" " 1/2 " 4 "
" " 1/4 " 2 "
Արտատպանի համար " 10 "
" " 1/2 " 5 "
Կանխիկ վճարելի

Համակ դրամ եւայն խրիկ ձեռնեւայ հասցեով
ԽՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խոշորագույնի մասնակցությունը գրողներին
ևս չեն դիմում ևս չեն դիմում դատ-
ուհիներն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:
Դրանցումնայ տողը 20 տառերով
կը կառնուի անգամի համար
25 առ 100 գեղը կը լինի:

ՈՒՂԵՐԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ Ա.Բ. Ն.Ա.ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԻԹԽԱՆՆ Ի ԴԻՄԱՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Վառնաի Հայ ապաստանելոց
օրնական Գանձախոմբին հայ ան-
գամները պատիւ ունեցան անցեալ
կիրակի Ն. Ա. Բարձրութեան իշ-
խանին ներկայանալով, իրեն մա-
տուցանելու արտաբերելու շնորհաւա-
լութեան ուղերձ մը այն հիւրասէր
ընդունելութեան առթիւ, զոր հա-
զարաւոր Հայ ապաստանաւորներ կը
գտնեն Պոչկարիայ հողին վրայ:
Ն. Ա. Բարձրութեան ներկայա-
ցող ազգայիններէն մին, Ուղերձը
մատուցանելու պահուն ըսաւ.

—Տէր իշխան, Աստուածային Նա-
խախառնութիւնը իր անխառն-
ցելի խորհրդով ուղեց մի անգամ
ևս մարտիրոսութեան փորձութե-
նէն անցնել Արարատի հին Ժողո-
վուրդը, որոյ առ Տէրն տիեզերոց
ունեցած հաւատքը արդէն քանիցս
փորձած էր ինք:

Բարձրապատիւ Տէր, մեր եղբայր
այժմեան տառապանքները տնկա-
նագրելի են. անոնց մէկ մասը մա-
ղապար ճողպարած և իր տեսած
արհաւիրքներէն տակաւին սրա-
թունք՝ Ձեր Հայրական վահանին
տակ պատապարտելու համար՝ կու-
գայ կը նետուի Ձեր Ա. Բարձրու-
թան Գահայից առջև, և ինքզինք
այս երկրին մէջ ապահով գտնելով՝
իր այստեղ ստացած առաջին զգա-
ցումն է յայտնել իր սրտագին և
բախտագիտութիւնը Ձերդ Ա.
Բարձրութեան, որ բարեհաճեցաւ
անոր շնորհել քրիստոնէական հիւ-
րասիրութիւն մը իր հողին վրայ:

Տէր իշխան, մեր սրտի խորիւրէն
յուզուած և յափշտակուած մեր սի-
րելի վիհապատին հոգւոյ մեծու-
թեան առջև, մենք, Ձեր Ա. Բարձ-
րութեան ամենահաւատարիմ և ա-
մենանձնուէր հպատակներս, մեր
ձայնը կը միացնենք մեր տառապ-
եալ եղբայր ձայնին հետ Երկնից

ամենաբարձր օրհնութիւնները հայց-
լու համար Ձեր Ա. Բարձրութեան,
իւր փառապանծ Քրիստոսունին,
մեր սիրելի հայրենեաց, Պոչկարիայ
և անոր լուսավոր ու մարդասէր
կառավարութեան վրայ:

Իշխանը բարեհաճեցաւ այս խօս-
քը լուսն պատասխանել այսպէս.

—Պարոններ, կը գնահատեմ այն
զգացումները, զոր կարտայայտէք
և լաւ կը մտնեմ ձեր եղբայր վի-
ճակը. հրահանգ տուած եմ իմ
կառավարութեան, որ հարկաւոր
գիւրութիւնները ընձեռն անոնց:

Եւ միշտ գոհ մնացած եմ իմ հայ
հպատակներէն: Կը գնահատեմ ձեր
ցիւղին յատկութիւնները, որոց
պատճառաւ նա իմ համակրու-
թեանցս առարկայ եղած է և գիտեմ
որ Հայերը կարեւոր ծառայութիւն
ներ մատուցած են այն երկրին-
րուն, ուր գտնուած են:

Հաղորդեցէք իմ այս արամադ-
րութիւնները Հայ Ժողովուրդին:

Այս շնորհալի պատասխանէն
յետոյ, յանձնախումբի անդամնե-
րէն մին յարեց.

—Ձեր Ա. Բարձրութիւնը թող
շնորհ ընէ ներքի մեզ, որ խոնար-
հաբար յայտնենք մեր շնորհաւա-
լութիւնը այն անօրինութեան հա-
մար, որով ապաստանեալք ձերա-
պէս վառնալէն ալլուր պիտի փո-
խադրուին երկաթուղով: --

Այս իշխանը վրձ տուաւ ուն-
կընդրութեան բարեհաճ կերպով:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Պիտանալեաներու այժմեան գոր-
ծունէութեան վրայ թանձր քող մը
ծածկուած է. ի վաւր կը պրպտենք
Եւրոպական թերթերն ու գործակա-
լութեանց հեռագիրները, անոնց
մէջ արանելու համար՝ մեծ տէրու-
թեանց հայկացիներուն, որոնք մե-
նորուն և բանակցութեանց վրայ
քիչ չափ լայն սփռող տեղեկութիւն
մը: Ստոյգ լուրերու պակասութիւն
նը կը մղէ մամուլը ենթադրու-
թեանց, որ ի հարկէ չեն կրնար դո-
հացնել ընդհանուր հետաքրքրու-
թիւնը:

Բան մը կայ սակայն որ ճշմա-
րիտ է, այն է թէ գիտնալեաց
այժմ տնդոտ գործունէութեան և
յոյժ կարեւոր բանակցութեանց մէջ
են, և այս կը հաստատուին այն իսկ

այն խորին լուսնաւոր զոր նոքա
կը պահեն այժմ զգոյշ կերպով:

Այս լուսնաւոր հաւանականաբար
պիտի տեւէ ժամանակ մը ևս, որմէ
յետոյ պիտի պարզուի Եւրոպական
քաղաքականութեան այժմեան
զարգանքը. անօգուտ կը թուի մեզ
այդ պահանջայ այժմէն թափանցե-
լու համար ենթադրութիւններու
մէջ դիզելիլ. ակներեւ է միայն որ
թուրքերն ալ ևս չի կրնար մնալ
այժմեան գրութեան մէջ, որ առիւ
քոտի մը, քան կաղմակերպուող
պետութեան մը կերպարանք ունի.
և այդ քոտը մեծ վտանգի կեն-
թառկէ Եւրոպական մեծամեծ շա-
հեր:

Եթէ խնդրը զուտ հայկական
լինէր, որոյ պատճառաւ Եւրոպա-
յի ֆասուէր, կրնայինք դառն փոր-
ձառութեանց վրայ հիմնուելով հաս-
տատապէս ըսել թէ ոչ մի տէրու-
թիւն պիտի չարժէր, Հայ ազգին
սեւ աչքերուն սիրտին համար:

Մեր ազգային ամենամեծ գրե-
թաղութիւնն եղաւ արդէն՝ մեր
գոյութեան կոխն մղելու ստիպ-
ուիլ այնպիսի ժամանակ մը,
ուր Եւրոպական քաղաքականու-
թիւնը չամշար իր ահագին ոյժե-
րով խոնարհիլ բարբարոսութեան
առջև և աչք գոցել քրիստոնէայ
ազգի մը աննկարագրելի տառա-
պանքներուն:

Բայց հայկական խնդրը Արե-
ւելեան խնդրին կարծարծէ և Ա-
րեւելեան խնդրին ալ Արեւմտեան,
Եւրոպական խնդրէ է:

Այս է ահա էական կէտը, զոր
պէտք չէ երբեք տեսութենէ կոր-
սնելու, ինչ որ հայկական խնդրոյ
փնտրելի խորհրդածութեան տառա-
կայ կաննէք:

Ենթադրելով իսկ պահ մը որ
ընդհանուր պատերազմի մը սար-
սափելի երկիւղին Եւրոպա գոհէ
իր առեւտրական շահերն և որոշէ
առ այժմ վերջնական կարգադրու-
թիւն մը չընել թուրքերոյ մասին,
ինչպէս Տէրութիւնը իրարու պի-
տի վստահին և չպիտի կոտորուի
որ իրենցմէ մին կամ միւսը յան-
կարծ առանձին գործողութեան մը
ձեռնարկէ: Այնպիսի պատերազմու-
կան մեծ պատրաստութեան մէջ է
և չըջարկող զրոյցներ կը հա-
տառեն թէ ծաղտեալ առաջին
արականներ խումբ խումբ կը մը-
նեն և. Պոլիս: Ինչպէս պիտի
վստահին տէրութիւնը թէ պա-
քսին յորձանգիւր կաղմակերպող
տարրը չպիտի շարունակէ իր գոր-
ծողութիւնները. ինչպէս կրնան
յուսուիլ որ թուրքերոյ անտեսական

և քաղաքական տագնապը, օրէ
շահող և օրէ ապրող դատաւարգն
ու ամառական երես չտանող մեծ
ու փոքր պաշտօնեաները իրենց
պարագաներով յուսահատական մի-
ջոցներու չպիտի մղէ:

Այս հանգամանքներ և ալ ա-
սանց նմաներ կը ստիպեն մեզ
խորհելու թէ մաս ժամանակի մէջ
կամ տէրութիւնը համաձայնու-
թեամբ պիտի տան վերջնական
որոշում մը, կամ պիտի ծագի
ընդհանուր պատերազմ մը, իր
անուր արհաւիրքներով և անհե-
ւակայելի հետեւանքներով:

Իբր մարդ ի բոլոր սրտէ կը
փափաքենք որ Եւրոպական հա-
մաձայնութեան մը բերկրաւորութիւն
առեւտր առեւելինք ընդհուպ և դժ-
բաղդութիւն չունենայինք հարկուր
հաղարաւոր անմղ պիտուորներու
մարդկային փառասիրութեան զո-
հուիլ տեսնելու պատերազմի ա-
նիծեալ գաշտին վրայ: Իսկ իբր
Հայ՝ ընդհանուր պատերազմէն
վախելու բան մը չունինք, վա-
սնելի չեայ ալ ևս մեզ համար մե-
ծագոյն վտանգ մը քան գրութիւնը
յորում կը գտնուին մեր թուրքահայ
եղբայրք, ամեն օր հաւաքական
կորուստներու մատուած սրով ու
սովով, որոյ ահուկ ճանկերը
պատրաստուած են մանուսնդ յա-
ռաջիկայ ձմեռ անթիւ մարդկա-
յին գոյութիւններ խեղդելու ի հա-
յաստան:

Թուրքերոյ մէջ իրաց կացու-
թեան հիմնական փոփոխութիւն
մը մատուցու կը թուի. Հայքս այդ
փոփոխութենէն կրնանք օգտուիլ,
բայց ոչ փաստիւ. առիւլ քան երբեք
մեզ համար ժամանակ է ըսելու.

Պատանք և յուսանք:

ԶԱՐԲԱՆԱԼԻ Է

Ներուի մեզ ըսել թէ զարմանա-
լի կը թուի մեզ ընթացքն մեր
այն բաժանորդներուն, որ հակա-
ռակ մեր խնդրանքներուն՝ ցարդ
չեն փութացած խրկիլ մեզ թէր-
թին բաժնեկիւնը: Կապ ստիցնինք
զիրենք որ շատ կը սխալին, եթէ
կը կարծեն որ յրապրական ծախ-
քերը այնքան աննշան են և խըմ-
բայրական աշխատութիւնն այն-
քան թեթեւ մի բան, որ կարելի
է առանց անպատշաճութեան մի
թերթ երկար ժամանակ ստանալ
ու չի վճարել:

Ուստի այսօր կրկին կը խնդրենք մեր
բաժնորդներէն ապառնել զմեզ մեր
թերթին մէջ բաժնեկիւններու վրայ
խօսելու անհաճոյ հարկէն, զո-
նոնք հասցնելով մեզ անյապօր:

ՓԱՆՍՏԱԿԱՆԻ

Տ Պ Ա Ւ Ռ Ր Ո Ւ Ի Ի Ն

(Հարև. Աստուծոյ թիւնն եւ վերջը :)

Պոլիսը ձգել փախչել՝ անձանք թին դիմելով կոյրի մը պէս որ չի կրնար հաշուել իր դէմ պար- Վոռող տարածութիւնները, փոքր զոհողութիւն չէ մեզ Հայերու հա- մար որ մեր եկեղեցիովը, դպրո- ցովն ու լիզուովը այնքան սերտիւ կապուած զօգուած ենք ծիրանա- ծիններու այս վաղեմի ուստանին հետ : Ինչ որ Հայը մօտ հինգ հարիւր տարուան ժամանակամիջո- ցին մէջ ձեռք բերած էր, մէկ վայրկեանի յախուռն որոշումով կը կորսնցունէր, կը լքէր՝ Ասիոյ խո- բերէն եկած վայրագ խուժուած ցեղի մը անհանգուժելի հարստու- հարութեանց չտոկալով :

Ժողովուրդի մը այս միահողոյն ուժգին քայքայումը փչող մեծ զանգուածի մը անաւորութիւնն ունէր, երևոյթը բնութեան այն մեծ յեղաշրջումներուն որոնք կամ աւեր ու ամալութիւն առաջ կը բերեն կամ անհաղին բարեփոխու- թեան մը հիմը կը դնեն :

Տարակոյս չկայ. Ժողովրդային այս միանուագ շարժումներ ժողո- վուրդներուն ճակատագիրները կը վճեն : Հիմա մեր կեանքը եկած հասած է հանգրուանի մը ուսկից ոչ ոք կրնայ ցոյց տալ թէ դէպ որ կողմ ուղղուելու ենք՝ փրկու- թեան ճանքան բռնելու համար. բախտը, անողոք, անձանթ բախ- տը սաստկավար հոսանքի քմահա- ճոյքովը կը հրէ, կը մղէ մեզ դէպ առաջ. ուրիշ բան չենք կրնար ը- նել եթէ ոչ թողուլ ինքզինքնիս՝ յուսահատի համակերպութեամբ՝ լաւագոյնին կամ յուրեղոյնին սպա- սելով միանգամայն :

Այս մտածումները կը խուժէին մտքիս մէջ շողեւանին բարձրա- ւանդակին վրայ, մարդկային ան- դադրում եռեւեփի մը մէջ տեղ, «կրցողն թող փախչի» ի այդ սրտաճմրկ տեսարանին առջեւ : Թէկ կողմէն կեանքի պահպանու- թեան բնագոյնը կուրախացնէր զիս. բայց միւս կողմէ սիրտս ու հո- գիս կարենէին՝ այնքան նուիրա- կան, զգացումներու հետ սերտիւ կապուած այնքան սիրեցեալ բա- ներէ սու յաւետ բաժնուելու այդ տրամալից վայրկեանին : Անէծք մը կուղէի ժայթքել այդ արհաւա- լից քաղաքին վրայ որ ամբողջ ազգի մը քանդումը կը փութաց- նէր գերմարդկային վայրագու- թեամբ. յիշատակներու, վաղեմի ա- նոյշ յիշատակներու վերբերումը, որոնք մասնաւորապէս տեղերու հետ կապուած կըլլան, չրթանցս վը- րայ կը գամէր այդ անէծքը : Հա- մակամութեան քրիստոնաշունչ ըզ- գացումը կը համակէր զիս. չէի ուզեր ճակատագրին դէմ ընդվը- զիլ, այս բանը անսահման մե- ղանչում մը թուելով ինծի :

Պտուտակը ցնցեց շողեւան ու փրփրեց ծովը. վտարի յետին վերջալոյսը բարեւեց մեզ անաս- ման ողջցնով մը. երազէր՝ բիրտ իրականութիւն մը, որ կը քշէր կը տանէր ժողովուրդի բեկոր մը, մէկ օղակը այն անագին շղթային որ Օսմանցիներուն անիրաւ ու ա- նագորոյն այդ ուստանէն սկսած է քաշուիլ հիմա դէպ ի օտարու- թեան սահմաններ :

Տրամաթախիծ մութ մը տիրած էր, երբ Սեյէնէ դուրս ելաւ վոս- փորէն ու սկսաւ տատանիլ :

ՓԱՆՍՏԱԿԱՆ

ՀԱՅԱՆՊԱՏ ՇԱՐՇՈՒՄՆԵՐ ԵՒՐՈՊԱԻ ՄԵՋ

ԳԵՐՄԱՆԻԱ

Մեր ընթերցողներ արդէն գի- տեն որ ինպատակ մեզ Զուիցերլոյ եւ Պերմանիոյ մէջ միթիւններ տնկի ունեցան, որք որոշեցին՝ թէ Հայ կարօտելոց դրամական օգնութիւն խրկելու եւ թէ կառավարութեանց քաղաքականութեան վրայ ազդե- լու համար՝ ամեն ջանք ընել նոյն երկիրներուն մէջ ընդհանուր շար- ժումներ յառաջ բերելու : Արդէն Գերմանիոյ պահպանողական թեք- թիւը, ինչպէս նաեւ այն ազատա- կան թեքութիւնը, որք հրեաներու ձեռ- քին մէջ եւ ծախու չեն, սկսած են իրենց ձայնը բարձրացնել : Միծ ուշադրութիւն կը դրաւ Տօքթօռ Լիպսիուսի յօդուածները, որ Հա- յաստան երթալէ եւ երկրին վիճակն ու պատահած դէպքերը անձամբ ստուգելէ յետոյ, այժմ իր գործու- նէութիւնը նուիրած է Հայկական դատին պաշտպանութեան :

Պէտլինի մէջ տեղի ունեցաւ կարեւոր միթիւն մը, ուր խօսեցան Տօքթօռ Լիպսիուս, վեր. Ֆրայէր եւ Պ. Թումանյան որ Հայկական հալածանաց մէկ աղէխարչ նկարու- գիրն ըրաւ յոյժ պերճախօսելովով : Ահա իր երկար ատենախօսու- թեան մէկ մասին համառօտու- թիւնը.

Հալածանքներ այժմ Թուրքիոյ մէջ աւելի արեւմտահեղ եւ աւելի սու- կալի են, քան Գիւղեղեմիանոսի եւ Ներսի հալածանքները : 19 ըրդ դարը հարստացաւ արհաւիրից տեսարաններով որ գայն ընդ միշտ նշանաւոր պիտի կացուցանեն : Ոչ թէ Թուրք ժողովուրդը, այլ կա- ռավարութիւնը որոշած է բնաջինջ ընել Հայերը : Եւրոպա անտարբեր մնաց 20 տարիէ ի վեր սկսուած հա- լածանքներուն հանդէպ, որ հետզ- հետէ սաստկանալով վերածուցան ընդհանուր կոտորածներու, ուր տղայք կոտոր կոտոր յօշոտեցան իրենց գողահար եւ աղբարակ ծը- նողաց աչքին առջեւ, իրարու կապ- ուած անմեղ մանուկներ իւր զբօ- սանք ծառայեցին զինուորաց, որք թրով քանի մը գլուխ մէկ անգամէն կտրելու փորձեր կընէին. աղջիկ-

ներ եւ կիներ իրենց մայրէն ձի- երու պոչին կապուած՝ շարժուելը- տոր եղան. այրերուն մերթը քեր- ծեցին եւ աչքերը հանեցին. դու- բերու մէջ ապաստանողներուն վրայ քորիւղ թափեցին եւ կենդանի այ- րեցին զանոնք :

Եգեանիոյ մէջ 3000 տղայ եւ կին մոմի պէս այրեցան քարիւղով :

Հայերը այս շարժարանքը կրե- ցին, որովհետեւ չուզեցին ուրանալ իրենց հաւատքը : Փրկուելու համար բաւ էր որ յայտարարէին թէ իս- լամութիւնը կընդունին : Ազգա- կաններս ամենքն ալ շարժուեցան Մարսուանի մէջ. քոյրս նահատու- կութեան աննկարագրելի տան- ջանքները կրելէ յետոյ՝ սպաննուե- ցաւ : Իրմէ պահանջեցին ընդունիլ իսլամութիւնը. իր պատասխանը բացասական եղաւ :

Պ. Թումանյան այստեղ ուզ- ուած, բոլորքած բացառանչեց. «Եւ տակաւին կան շատեր, որ չեն ուզեր հաւատալ այս խժդոթեանց, բայց բան մը կայ ճշմարիտ, իրա- կան, այն է թէ ես այլ եւս քոյր չու- նիմ. (աննկարագրելի յուզում ուն- կեցիրներու մէջ, ընդհանուր վշ- տակցութիւն) : »

«Ես հինգ ամիս բանտարկեալ մնացի առանց դատուելու եւ մահ- ուան դատապարտուեցայ առանց յանցաւորութեան ապացոյցի : Յա- ճախ մեզ կը կրկնեն թէ կառավա- րութիւնը իրաւունք ունի Հայոց յեղափոխականութիւնը խեղդելու. բարեկամներս, իբր Հայ կը վեր- ցնեմ ձեռքս եւ կերպնում իմ ազգիս Աստուծոյն առջեւ թէ Հայ ազգը ոպստում է չէ »

Այս ատենախօսութիւնը արտա- կարգ տպաւորութիւն գործեց ուն- կեցիրներուն վրայ, որոց մէջ բազ- մաթիւ արտասուողներ եղան :

Յետոյ խօսեցաւ վեր. Ֆրայէր հետեւեալ իմաստով :

Հայկական հալածանքները մեր դարուն ամօթն են (ծափ) անե- րեւակայելի են պատահած դէպ- քերը, որոց հերոսահիւները նախ- ընտրեցին չարաչար մահուամբ մեռնիլ, քան անպատուութեան ենթարկուիլ : Պէտք է որ Գեր- մանիա բարձրացնէ իր ձայնը. դրամ հանգանակելու խնդիր չէ այս. բարձրագոյն բարոյական պարտքի մը կոտորումը կը պա- հանջենք՝ նահատակ ազգի մը հան- դէպ :

Հայկական դատին ամենաջերմ պաշտպան տօքթօռ Լիպսիուս բեմ բարձրացաւ ծափահարութեանց մէջ եւ խօսեցաւ այսպէս :

Ես Հայ չեմ, եւ իբր Գերմանա- ցի կը վստահացնեմ Ձեզ թէ ինչ որ Պ. Թումանյան հաղորդեց, մէկ միլիոններովն իսկ չէ այն խժդ- ժութեանց, որք տեղի ունեցան. 10 ամիս Հայաստանի մէջ պըտը- տեցայ եւ կոտորածներուն ցանկն գրպանիս մէջ է. ցանկին մէջ նը- շանակուած են 88242 կոտորեալ- ներ, բայց անոնց իրական թիւը չատ աւելի է, որոյ մէջ կը գըտ-

նուի առհասարակ կրթեալ եւ լու- սաւորեալ դասակարգը. 400,000 որբեր եւ այրիներ մնացին, որք այսօր չքաւորութեան մէջ են. կատկած չիկայ թէ կառավարու- թեան հրամանով եղան շարդերը. նոյն իսկ Թուրքերու վկայութեամբ ստուգած եմ որ ամիսներով մըզ- կիթներու մէջ խուժանը հրահան- գուած է քրիստոնեաները շարդե- ուլ միջոցներուն եւ կերպերուն մա- սին :

Եւրոպայի քաղաքականութիւնը եւ միայն Եւրոպայի քաղաքակա- նութիւնն է պատճառ ամբողջ քը- ռիստոնեայ ժողովուրդի մը կոտու- չուելուն (աղմուկ, խլրտում) : Մի- ջին դարու մէջ արիւն թափեցինք մեր քրիստոնեայ եղբարց ցաւերը ամիքելու համար Ս. Երկրին մէջ. բայց ինչ կը տանենք 19 դարու մէջ՝ Գիւսանագիտութիւնը մեկանի հեղեղներ կը սպառէ, որոց մէջ կը խեղդուի ամբողջ քրիստոնեայ ժո- ղովուրդ մը : Թուրք կայսրու- թիւնը կը տատանի, պէտք է ըզ- գուշութեան միջոցներ ձեռք առ- նալ որ Թուրքին անկմամբը երկ- րին վերջին քրիստոնեան ալ չան- հետանայ :

Կիսապաշտօնական Նորոտեոյէ Ալիեմալեկ Յայրուկի սկսած է ըս- պառնական լեզու մը գործածել Թուրքիոյ դէմ եւ կերեւի որ կառա- վարութիւնը հաշտ աչօք կը դիտէ ժողովրդային շարժումները ինը պատահայոց :

Մէկ շաբաթի մէջ երեք յանձ- նաժողովներ կազմուեցան Պէտլի- նի, Համպուրկի եւ Ֆրանքֆորթի մէջ :

Վէսթֆալիոյ բողոքական Սի- նօզը հաւաքուելով պաշտօնապէս իր ցառումը յայտնեց Թուրքե- լուն խժդոթութեանց առթիւ : Քա- հանաներ յանձն առին եկեղեցիներ ու մէջ խօսիլ Հայոց անլուր չար- չարանայ վրայ եւ պահանջել ժո- ղովուրդէն որ դրամական օգնու- թիւն հասցնէ կոտորելոց որբե- լուն եւ այրիներուն :

ՖՐԱՆՍԱ

Հայ գործիչ մը Բարիզէն կը գրէ մեզ 1/13 սեպտ, թուակիր իր մէկ նամակով :

« Յուսալի է որ այսուհետեւ հայանպատ շարժումներ անպա- կաս ըլլան հոյ, ուր վերջերս կազմուեցաւ Ֆրանքօ-Հայկական ընկերութիւն մը, որ իրեն նպա- տակ ունի, Ա. նպատակներ հասցնել Հայաստան, Բ. հայկական դատը պաշտպանել մամլոյ եւ հրապարա- կախօսութեանց միջոցաւ : Նշանա-ւոր բռնաբեկութիւններ միտցած են վե- լոյիչեալ ընկերութեան եւ յայտնի քաղաքական անձնաւորութիւններ խոստացած են իրենց օժանդա- կութիւնը : Չայս կարող էք ծա- նուցանել ձեր ընթերցողներուն. ուրիշ մանրամասնութիւններ ի կար- գին : »

Գեր. տ' իւլիսի եպիսկոպոս, կոմս Ա. տը Մէօն և Աբբա լը-միր հետեւեալ նամակը գրած են արտաքին գործոց նախարար Պ. Հանթօթի :

Պ. Նախարար. — Ստորագրեալները մտադիր են խորհրդարանը բացուելուն պէս՝ ձեզ հարցում մը ուղղելու այն միջոցներու մասին զոր ֆրանսական կառավարութիւնը ձեռք առած է կամ պիտի առնէ՝ օսմանեան կայսրութեան քրիստոնեայ հպատակներուն պաշտպանութիւնը ազգու և արդիւնաւոր ընելու համար : Մտադիր ենք մասնաւորապէս ձեր ուշադրութիւնը հրաւիրել՝ ճշշելու այն նողկալի եղանակին վրայ, զոր օսմանեան կառավարութիւնը սովորութիւն ըրած է գործադրել, կամ թոյլատրել որ իր զինուորները գործադրեն յեղափոխական յուզիչներու նկատմամբ : Փոխանակ յանցաւորները հաշտեցնելու, զինուոր ու ոստիկան կիշնան անպաշտպան ժողովուրդին վրայ, և կը գործեն հաւաքական ջարդեր, կողոպուտ և հրձգութիւն, առանց խնայելու կիներուն և տղաներուն : Այս բարբարոսական արարքն յատկանիշն եղան օսմանեան զինուորաց ճշնչիւր գործողութեան՝ Հայաստանի, կրէտէի մէջ և ուրիշ տեղեր : Ֆրանսայի հանրային կարծիքին համար անբացատրելի կը ֆնայ թէ ինչու համար տէրութիւնք անգործ և անշարժ կը ֆնան և լոկ պղատոնական պարսաւանքներ կուղղեն : Մասնաւորապէս ֆրանսական կառավարութեան կողմէն այսպիսի ընթացք մը անբացատրելի է, քանզի անոր կիշնայ մեր երկրին դարաւոր պաշտօնը Արեւելքի մէջ պահպանելու և գործադրելու պատիւը :

Եւրոպա համամատարար գրեթէ այնքան ստորնացաւ, որքան օսմանեան կայսրութիւնը : Անցեալին մէջ փառաւոր պատմութիւն և իրենց ներկայացուցիչ կառավարութիւններ ունեցող քաղաքակիրթ ազգ'ը, որոնք կը թողուն որ Հայաստանը արեան մէջ թաթ-խող ոճիրներուն նման գործեր կատարուին, աւելի յանցաւոր են քան այն ոճիրներ գործող մարդասպանները : Եւ ասոր կըսեն քաղաքակիրթութիւն և Լօպանօֆի, Հանթօթի Սօլզպերիի և այլոց պէս պետական մարդիկ՝ իրենց պարտքը կատարած և իրենց երկիրներուն շահին համաձայն շարժած ըլլալ կը կարծեն, անվրդով դիտելով այդ սպանութիւնները, որոնք բարբարոսութեան ամենէն միջին թուականները կը յիշեցնեն :

Լա ժեօն Թիւրքի

Կ. Պօլսէն եկած հեռագրերները կարդալով, կը փորձուինք հաւատալու թէ Հայոց ջարդը իրենց գրգռութեամբ եղած է

Անկողմնակալ վկաներու զանազան պատմութիւնները կը հաստատեն որ ընդհակառակն պոնքալին տիրող վճռական մարդոց ձեռնարկին շարժառիթն էր առջին առեւելայն մօտալուտ ջարդարուն, որք պիտի արեւելէին Կ. Պօլսը : Մեզ կը հաղորդեն վճռական վկայութիւն մը, որմէ յայտնապէս կը տեսնուի թէ օգոստ. ամսոյ սկիզբէն իսլամները կը պատրաստուէին վերանորոգելու մայրաքաղաքին մէջ այն անկարգութիւններն ու ոճիրները, որոնց հանդիսաւոր եղան թրքական նահանգները տարիէ մը ի վեր : Տեսանք թէ թուրք կառավարութիւնը ինչպէս յարգեց օսմանաւորութեան պայմանները :

Պոնքան ազատուելուն պէս՝ ոստիկանութիւնը, զինուորները և խուժանը իրենց ճիգերը կրկնապատկեցին Հայոց դէմ : Կոտորածը գաղութներու համար դատարաններուն յանձնուցան չէթէ մարդասպանները, այլ զոհերը : Այս կիրպով թուրքիա կը կարծէ թէ պարտի հնազանդիլ տէրութեանց պատուէրներուն : Սոքա պարտին գործել և որքան ալ թուրքիոյ խնդրոյն կարգադրութիւնը զբաւարութիւններ ունենայ, պէտք է որ համաձայնին զայն լուծելու համար :

Լը ժոռնալ տը Բարի

Ֆիկարօլի մէջ Պ. Վալֆրէ հրատարակած է յօդուած մը, որ ընդհանուր ուշադրութիւն գրաւեց, յօդուածագիրն յարաբերութեանց պատճառաւ Ֆրանսաի արտաքին գործոց նախարարութեան հետ : Թողուածին եզրակացութիւնը հետեւեալն է :

Ֆրանսաի քաղաքակրթութիւնն եղած է ցարդ՝ պաշտպանել թուրքը իբր տարր եւրոպական հաւասարակշռութեան . բայց երբ մենք մեր առջին կը տեսնենք քրիստոնեայ ազգեր որք զիպուածով օսմ. կայսրութեան հովանաւորութեան տակ կը գտնուին, մեր պարտքն է անոնց ընծայ'ը սեր ոճակցութիւնը . ալ պէտք չիկայ Դուռը հրաւիրելու որ իր դաշնագրական պարտքերը չգործադրէ . հերիք եւրոպոս անկէ խաղաղեցաւ . Տէրութիւնը բռնի կերպով դաշնագիրները գործադրելով, կրնան յաղթանակել տալ արդարութիւնն ու իրաւունքը : Եթէ Պօլս զուտ թրքական մայրաքաղաք մ'ըլլար, ինդիրը ուրիշ էր . բայց այնտեղի բնակչութեան շահերուն մեծամասնութիւնը Եւրոպացիներունն է . հարկաւոր է ազդուապէս պաշտպանել այդ շահերը, զրկելով Դուռը իր զինուորական և ոստիկանական ոյժերէն : Պէտք է Պօլսը ազատ քաղաք հռչակել՝ միջազգային երաշխաւորութեան տակ :

ԱԵԳԼԻԱ

Շարժումները կը ծաւալին, մի-թինկները կը քաղվանան, հայկա-

կան հարցին հուրիւսալ յօդուածները կը վստան մամուլին մէջ . այդ ամենի մասին մեր այս թը-ւով անկարող ենք մեր ընթերցողներուն ազգեկութիւն տալու, տեղի աղութեան պատճառով :

Պ. Կլատթօն իրեն եզած գիմումներուն ի պատասխան կը զրէնամակներ, որք մէյմէկ սոսկալի դատապարտութիւններ են՝ թուրք պետութեան դէմ արձակուած :

—o—

Խաղաղաւիրաց ընկերաշինը Պուտարէսթէն նամակ մը զրեւով Պ. Կլատթօնի, անոր կիմացնէ որ որոշած է յառաջիկայ համաժողովին ներկայացնել հայկական խնդիրը և կառավարութեանց կոչում ընել թուրքին ձեռքէն ազատելու համար միլիօնաւոր ժողովուրդ մը, որոյ պարտին օգնել ամեն մարդասէրը :

—o—

Էտինպուրկի քաղաքապետական ժողովը Պօլսոյ կոտորածին առթիւ իր նիստը մէկ օր դադրեցուց և որոշեց իր ցատումը յայտնել ջարդերուն դէմ և դիմում ընել կառավարութեան, ինդրելու համար որ վերջ մը տայ այս կացութեան :

—o—

Լօրտ Ռօզպերի Պօլսոյ պէպքերու առթիւ իր բարեկամներէն միայն նամակ մը գրած է ուր կըսէ .

« Կ. Պօլսոյ վերջին կոտորածները զայրոյթի զգացում մը յառաջ բերին, զոր հազիւ կարելի է լեզուով բացատրել, և որուն կը յուսամ թէ այս երկրին մէջ ամեն ոք մասնակից է : Ինչ ընելու է ուրեմն :

« Շատ մարդիկ իրենց յոյսը ազատական կուսակցութեան պետերուն վրայ դրած են մղում մը տալու համար . այս տեսակ մղում մը իմ՝ կարծիքով սխալ պիտի ըլլար, որովհետեւ ինդիրը կուսակցական գործ մը չէ, այլ կուսակցութեան աւելի բարձր, ընդհանուր մարդասիրութեան, քրիստոնեութեան և քաղաքակրթութեան խնդիր մ'է : »

« Ներկայ վիճակին պատասխանատուութիւնը աւելի կը պատկանի եւրոպական միւս տէրութեանց, քան մեր կառավարութեան, և ցուօք որտեղ կըսեմ, մեր կառավարութիւնն ալ կը թուի թէ և ոչ մի տէրութեան հետ մասնաւորապէս մոտեմտական յարաբերութիւններ ունի : »

« Ես բոլոր յոյսս կը դնեմ այն երիտասարդ կայսեր բնական զգացումներուն վրայ, որ ընդ հուպ պիտի գայ այցելել մեր ափունքը և որոյ պատասխանատուութիւնը այնքան մեծ է, որքան միանգամայն ընդարձակ է բարիք ընելու իր կարողութիւնը : Այսու ամենայնիւ եթէ բողոքի միթինկներ տեղի ունենան, ուրախ պիտի ըլլամ, երբ ատոնք ամեն ուրեք կազմակերպուին, զոնէ ցուցնելու համար որ

այս ժողովուրդը անգլայ անշարժութեան մը մէջ ինկած չէ : Թող այդ միթինկները ըլլան ազգային, ինքնակամ և զերծ կուսակցական ոգիէ : »

—o—

Կը կարծուի որ երբ Չարը Լօնտոն հասնի, Անգլիոյ ժողովուրդը իրեն դիմում պիտի ընէ Հայոց վիճակին բարեփոխան ի նըպատ :

—o—

Անգլիոյ պահպանողական կուսակցութեան նշանաւոր մի թերթը, Սթանտարտ հայտնաբերող շարժումներու մասին խօսելով կըսէ որ եթէ միթինկներն ու ցոյցերը ընդհանրանան, Լօրտ Սօլզպերի պիտի ստիպուի համակերպիլ ժողովուրդի կամքին, նոյն իսկ առանց հոգ ընելու Եւրոպական միւս տէրութեանց միարանութիւնը և պիտի գործէ ինչ որ Անգլիոյ պատիւն ու պարտքը կը պահանջեն :

« Սթանտարտ » առաջին անգամ ըլլալով կը գործածէ այսպիսի լեզու մը, սրուն այնքան աւելի նըշանակութիւն տալ պարտիք, որքան կը կարծուի թէ նոյն թերթը սովորաբար Լօրտ Սօլզպերիի կարծիքները կը ներկայացնէ :

ԹԻԻՐԻ ՀԻԻԻԻՄԷԹԻՆ

Ի Թ Հ Ա Մ Ը

Էսկի սաւրլարտա, Ասիա գը-թասընտա Սէնուգիլէրին վէ Լէնկ-թիմուրուն իգա էյլէտիլի խէպասէթի թէվարիլէրի միւթալաա իտէնլէրին նէֆրէթ ու իբրահը միւսիպ օլմագտա իտիլէր, վէ նէրոն, Ճէնկիլիսան վէ Լէնկթիմուր իտիմէրի նալէթլէրլէ թէլէֆֆիւզ իտիլմէքտէ իտի . զիրա շու մէտէնի սաւրտա, օլ միսիլլի գանլը մէնգարէլէրին վիճուտ պուլաճաղը թասավուր օլունմագտը : Ֆագաթ մէտէնի թապիր իթիլիմիլ շու սաւր թէվարիլի միւթապալէլէյէ օլ տէրէճէ միւսիպի նէֆրէթ սա-յիֆէլէր միւսա պըրագտը քի . Լէնկթիմուր վէ քէնտի էմալըն տան տահաղաթտար, տահա վահ շի վէ տահա մէլուն խուրիլ (արիւնարբու) ճոնիլէր վէ տահա մէնֆուր մէնգարէլէր հուսուպ կէ-թիւտի, էվլէլ Լէնկթիմուր քէնտի շիքեարընը զապթը պլթընա ալտըգտան սոնրա անըն էօմր ու իգալլինի թահթը թէմիլնէ ա-լըրուր . լաքին պու կիւնքի թիւրք հիւքիւմէթի տահա զաթտար վէ վիճուտաղ օլարագ, սարլարտան պէրիւ քէնտիլինէ էն ֆայտալը պիր միլլէթ էֆրատընըն ճիս ու սինի պիլա թէֆրիլ, իհմա ու իս-թիրհամա սալա գուլագ վէրմէյէ-րէք ումումէն գաթլ ու թէլէֆ իթմէքտէ տիր . պու տէ էօյլէ պիր սաւրտաքի տիւնեանըն գուլվէի ինդիպաթ միլլէի միւթմէտտի-նէնիւ կէտի իթիւրընտա պու-լունիլօր :

